ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-7-6-Ա

ք. Երևան 01.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում քննարկեց 2025 թվականի փետրվարի 17-ին գործադիր տնօրեն Էլեն Բարխուդարյանի կողմից ներկայացված՝ «ՄԻՓԵՅ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 53-66, AM) «MEPAY» (No20240047) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում, ԱԾՄԴ-ի 35-րդ և 36-րդ դասերի ծառայությունների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող՝ «MiPay» («Xiaomi Inc.», Floor 13, Rainbow City Shopping Mall II, of China Resources, NO. 68, Qinghe Middle Street, Haidian District, Beijing (CN), IR-1470868, 17.04.2009թ.) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 130.2-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում հայտարկված՝ «MEPAY» նիշը ներառված է ավելի վաղ գրանցված «MiPay» բառային ապրանքային նշանի մեջ, և տարբերությունը կայանում է բառամիջում՝ (E) և (i) տառերի մեջ՝ «M(E)PAY» և «M(i)Pay»,

որոնք էական դեր չեն կատարում ապրանքային նշանի ընկալման հարցում և միջին սպառողի մոտ կարող են առաջացնել նույն բառի ընկալման զգացողություն:
Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս «Xiaomi Inc.» ընկերության կողմից օգտագործվող՝ «MiPay» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է https://en.wikipedia.org/wiki/Mi-Pay, https://mi-pay-xiaomi-inc.en.aptoide.com/app, https://www.mi.com/in/service/support/mipay.html, https://am.mi-shop.com/, https://mi-pay-payment-ap- -by-xiaomi.en.softonic.com/android, https://www.facebook.com/XiaomiGlobal/posts/leave-the-wallet-at-home-introdcing-mipay-our-contactless-mobile-payment-servic/1140136279355297/ ինտերնետային կայքերում և, որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի քննարկումը կասեցնելու վերաբերյալ առաջարկ մինչև դատարանում քաղաքացիական գործով քննվող (ԵԴ2/9222/02/24) գործի ավարտը, որով վիճարկվում է հակադրված ապրանքային նշանի չեղյալ ճանաչումը:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը ներկա չէր նիստին:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Էլեն Բարխուդարյանի կողմից ներկայացված՝ «ՄԻՓԵՅ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 53-66, AM) «MEPAY» (No20240047) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքի

քննարկումը հետաձգել մինչև (ԵԴ2/9222/02/24) դատական գործով վճռի հրապարակումը:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ